ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

✉ 3304, Սյունիքի մարզ, ք.Կապան, Մ.Ստեփանյան 2, ☎ (010) 311-342, էլ.փոստ. syuniq@prosecutor.am

ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆ
ելքի № 65/4435-24 թերթ
«25» 06 2024 թ.

ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանուն

Ի լրումն 2024թ. հունիսի 4-ի 65/3800-24 թվակիր արաջարկության.

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատախազի կողմից պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելն ընդգրկում է՝

(...)

2) վարչական դատավարության կարգով պետության (համայնքի) գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցի հարուցումը. (...)»:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Դատախազը պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցում է հետևյալ բացառիկ դեպքերում, երբ՝

1) իր լիազորություններն իրականացնելիս հայտնաբերում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը, որին վերապահված է պետական (համայնքային) շահերի պաշտպանությանն առնչվող տվյալ հարցերով հայց ներկայացնելը, իրազեկ լինելով պետական (համայնքային) շահերի խախտման փաստի մասին, դատախազի կողմից հայց ներկայացնելու առաջարկություն ստանալուց հետո ողջամիտ ժամկետում հայց չի ներկայացրել:»

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Համայնքի ավագանին սույն օրենքով սահմանված կարգով

(...)

10) դատական կարգով կարող է վիճարկել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, օրենքներին և համայնքի ավագանու որոշումներին հակասող՝ համայնքի ղեկավարի որոշումները.»:

ՀՀ Վճռաբեկ դատարանն իր 2024 թվականի մայիսի 10-ի թիվ ՎԴ2/0250/05/23 որոշմամբ անդրադառնալով համայնքային շահերի հայց հարուցելու լիազորության իրականացմանը՝ նշել է հետևյալը.

«(...) երբ դատախազը իր լիազորություններն իրականացնելիս հայտնաբերել է համայնքի ղեկավարի կողմից համայնքային շահերի խախտման փաստ, պարտավոր է հայց ներկայացնելու առաջարկությամբ դիմել համայնքի ավագանուն, քանի որ վերջինիս է վերապահված համայնքային շահերի պաշտպանությանն առնչվող տվյալ հարցերով հայց ներկայացնելու առաջնային իրավասությունը: Եթե դատախազի կողմից հայց ներկայացնելու առաջարկություն ստանալուց հետո համայնքի ավագանին ողջամիտ ժամկետում հայց չի ներկայացրել դատարան, ապա միայն այդ պայմաններում է դատախազությունը ձեռք բերում համայնքային շահերի պաշտպանության հայց ներկայացնելու իրավունք:»:

ՀՀ Վճռաբեկ դատարանն իր նույն որոշմամբ, անդրադառնալով որևէ այլ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից դատախազության առաջարկի հիման վրա վարչական դատավարության կարգով պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու ժամկետներին, նշել է.

«(...) մի շարք դեպքերում օրենսդիրը պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու առաջնային լիազորությունը վերապահել է այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին, որի իրավասությունների ոլորտում պետությանը (համայնքին) պատճառվել է գույքային վնաս:

Ուստի այն դեպքում, երբ պետական (համայնքային) շահերի պաշտպանությանն առնչվող տվյալ հարցով հայց ներկայացնելը վերապահված է որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, դատախազը, նախ պետք է պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց ներկայացնելու առաջարկություն կատարի համապատասխան պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին:

(...) Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատախազի ներկայացրած առաջարկությունը ստանալուց հետո պետական շահերի պաշտպանությանն առնչվող համապատասխան հայցով դատարան դիմելու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի իրավասությունը սահմանափակված է ողջամիտ ժամկետով, որը տվյալ պարագայում Վճռաբեկ դատարանի գնահատմամբ պետք է հաշվարկվի համապատասխան հայցատեսակի դեպքում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված ժամկետներով:

Ընդ որում, տվյալ ժամկետի հաշվարկման ելակետը պետք է պայմանավորել դատախազի կողմից ներկայացված առաջարկությունը ստանալու պահով:

Այլ կերպ ասած՝ եթե պետական կամ տեղական ինքակառավարման մարմինը ստացել է դատախազի առաջարկությունը՝ պետական շահերի պաշտպանությանն առնչվող հարցով դատարան դիմելու վերաբերյալ, ապա տվյալ մարմինը առաջարկությունը ստանալուց հետո ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով հայց ներկայացնելու ժամկետների պահպանմամբ պետք է դիմի ՀՀ վարչական դատարան, որպիսի ժամկետներում ներկայացված հայցը կհամարվի ողջամիտ ժամկետում ներկայացված:

Այսինքն՝ համայնքի ղեկավարի վարչական ակտի, գործողության կամ անգործության կապակցությամբ դատախազը իրավասու է համայնքային շահերի պաշտպանության հայց հարուցել միայն այն պայմաններում, երբ վերջինս հայց ներկայացնելու առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, իսկ **համայնքի** ավագանին ողջամիտ ժամկետում հայց չի ներկայացրել, այլ կերպ ասած՝ դրսևորել է անգործություն, որպիսի պայմաններում կարելի է փաստել օրենքով նախատեսված բացառիկ դեպքի և ըստ այդմ՝ պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց ներկայացնելու լիազորությունը իրացնելու համար անհրաժեշտ նախապայմանների առկայության մասին»:

Պետության գույքային շահերի արդյունավետ պաշտպանությունն ապահովելու և պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորությունների շրջանակում իրականացված ուսումնասիրության ընթացքում պարզվել է հետևյալը.

Մարտունի Արզանյանը, 26.12.2008թ. խմբագրությամբ գործող «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին, 12-13-րդ կետերով, նույն օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 56-րդ, 61-րդ, 67-68-րդ հոդվածներով, ՀՀ Կառավարության 12.04.2001թ. N 286 որոշմամբ հաստատված կարգի (V բաժին) 22-րդ և 24-րդ կետերով սահմանված կարգով օժտված լինելով համայնքի ավագանու նիստ հրավիրելու և վարելու, համայնքի սեփականություն համարվող գույքն օտարելու մասին առաջարկությամբ դիմելու, ավագանու համաձայնությամբ և սահմանած պայմաններով, սահմանված կարգով համայնքի սեփականություն համարվող հողամասերն օտարելու, հողերը կառավարելու և տնօրինելու, հողերի աճուրդ կազմակերպելու և իրականացնելու լիազորություններով, պաշտոնեական դիրքն օգտագործելով, պաշտոնեական կեղծիք կատարելով, այդ թվում՝ անզգուշությամբ գործող այլ անձանց օգտագործելու միջոցով, յուրացրել է իր կառավարման և տնօրինման ներքո գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող առանձնապես խոշոր չափերով անշարժ գույքը, մասնավորապես՝ Մարտունի Արզանյանը, շահադիտական՝ իրեն ու իր ընտանիքին պատկանող (25-ական տոկոս բաժնեմասը՝ նրան ու կնոջը՝ Գայանե Արզանյանին, իսկ 50 տոկոսը՝ որդուն՝ Լյովա Արզանյանին), 2001թ. հիմնադրված «Ներքին թաղի Հայարփի» ՍՊ ընկերությանը (որի կանոնադրությամբ, ի թիվս այլոց, նա օժտվել է ընկերության կառավարմանը մասնակցելու, ընդհանուր ժողովի կազմում որոշումներ կայացնելու, շահույթ ստանալու, ընկերության տնօրեն նշանակելու իրավասությամբ) համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր 32.46 հա գյուղատնտեսական նշանակության հողամասերն օտարելու դրդումներով, համայնքի կարիքների համար ծախսելու նպատակով համայնքային բյուջե ֆինանսական միջոցներ մուտքագրելու հանգամանքն իր համար բարենպաստ լույսի ներքո ներկայացնելու ցանկությամբ, միասնական հանցավոր դիտավորությամբ, շարունակական և նույնաբնույթ գործողություններով 2009թ. ընթացքում կարճ ժամանակամիջոցում՝ 2009թ.

մարտի 31-ին, ապա նույն թվականի հուլիսի 8-ին, համայնքի ավագանու ձևական օրակարգ հրավիրելով, օգտագործելով անզգուշությամբ գործող, իրենից ծառայողական կախվածության մեջ գտնվող աշխատակիցներ, համայնքի ղեկավարի տեղակալ Լարիսա Դաղունցին, աշխատակազմի քարտուղար Սանթրիկ Մաքունցին, նրանց միջոցով համայնքի ավագանու նիստերի արձանագրությունների 2009թ. մատյանում հողամասերի օտարման կապակցությամբ ավագանու չկայացած նիստերի մասին մտցրել է կեղծ՝ իբրև 31.03.2009թ. N 9 Ա և 08.07.2009թ. N 17 Ա որոշումներով հաստատված ավագանու նիստի օրակարգի մասին բովանդակությամբ գրառումներ, այնուհետև Սանթրիկ Մաքունցին դրդել՝ հանձնարարել է ձեռագիր կազմել սեփականության իրավունքի ծագման համար հիմք հանդիսացող 19.88 հա և 12.58 հա «Հողամասն աճուրդով վաճառելու մասին» և «Հողամասերի աճուրդով վաճառքի արդյունքների մասին» 04.05.2009թ. և 01.10.2009թ. N (1 և 2) կեղծ արձանագրությունները, որոնք նրա դրդմամբ ստորագրել են նաև աճուրդի արձանագրող Սանթրիկ Մաքունցը, իսկ 01.10.2009թ. արձանագրությունները՝ անզգուշությամբ գործող Սամվել Մաքունցը, որոնց ամբողջականությունն ապահովելու համար անձամբ ստորագրել ու «ՀՀ Սյունիքի մարզ Ն.Խնձորեսկի գյուղապետարան» կնիքի դրոշմով հաստատել է դրանք և հողամասերն օտարելու մասին 04.05.2009թ. թիվ 05Ա և 02.10.2009թ. թիվ 06Ա որոշումները, ապա աճուրդի արդյունքներն ու հաղթողն արդեն իսկ կանխորոշված լինելու պայմաններում, իբրև աճուրդի կազմակերպիչ (աճուրդավար)՝ փաստացի չկայացած աճուրդում հաղթող է ճանաչել 1-ին աճուրդի օրը՝ 04.05.2009թ. իր որդու՝ Լյովա Արզանյանի փոխարեն ընկերության տնօրեն ձևականորեն նշանակված իր մորաքրոջ որդի Արտուշ Մինասյանին, որպեսզի և՛ շրջանցի «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված արգելքը, և՛ թաքցնի ու խեղաթյուրի իր կողմից հանցավոր ճանապարհով ստացված գույքի հանցավոր ծագումը, ինչպես նաև նշված գույքի նկատմամբ փաստացի իր կողմից սեփականության իրավունքի ձեռքբերման փաստը: Այդ նպատակով Արտուշ Մինասյանի հետ 18.05.2009թ. և 09.10.2009թ. կնքել է նոտարական վավերացմամբ հողի առուվաճառքի պայմանագրեր, որոնք ՀՀ կադաստրի կոմիտեի Գորիսի տարածքային ստորաբաժանում ներկայացնելուց հետո՝ տրվել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 2009թ. մայիսի 20-ի 09-063-105-026 և 2009թ. հոկտեմբերի 13-ի 09-063-105-027 կադաստրային ծածկագրերով վկայականներ: Արդյունքում նա, փաստացի չկայացած աճուրդների միջոցով իր ընտանիքին պատկանող ընկերության անունից հանդես եկած Արտուշ Մինասյանին 4.272.000 ՀՀ դրամ և 2.740.800 ՀՀ դրամ արժեքներով օտարել է հողամասերը և սեփականությամբ իր և իր ընտանիքի անդամներին պատկանող ընկերության հաշվեկշիռ մտցնելու, սեփականությունը դարձնելու ձևով, յուրացրել է իրեն վստահված համայնքային սեփականություն հանդիսացող առանձնապես խոշոր չափերով՝ 19.88 հա և 12.58 հա՝ ընդհանուր 13.957.800 ՀՀ դրամ կադաստրային արժեք ունեցող 32.46 հա հողամասերը: Միաժամանակ, Մարտունի Արզանյանը, գույքի իրական պատկանելիությունը թաքցնելու և հանցավոր ծագման աղբյուրն ու իրական բնույթը

խեղաթյուրելու, հանցավոր հետքերը վերացնելու նպատակով իր նշված դիտավորյալ գործողություններով պատրանք է ստեղծել, թե հիշյալ գույքը համայնքի կողմից օտարվում է, իսկ իր ընտանիքին պատկանող «Ներքին թաղի Հայարփի» ՍՊ ընկերությանը կողմից այն ձեռք է բերվում օրինական գործարքների արդյունքում, իրականացրել է հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի փոխանցում «Ներքին թաղի Հայարփի» ՍՊ ընկերությանը, ինչը հնարավորություն է տվել համայնքի բնակիչներից և այլ անձանցից թաքցնել համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի՝ իր կողմից փաստացի տիրապետելու և տնօրինելու հանգամանքը: Հետագայում՝ 08.10.2010թ. Արտուշ Մինասյանին (մահացել է 20.11.2009թ.) փոխարինած Լյովա Արզանյանը նշված հողկտորները տարեկան համապատասխանաբար՝ 954.240 ՀՀ դրամ և 603.840 ՀՀ դրամ վճարի դիմաց վարձակալությամբ հանձնել է Խնձորեսկ բնակավայրի բնակիչ Մարտունիկ Բուդաղյանի ժամանակավոր օգտագործմանը:

Մարտունի Մելիքի Արզանյանը, 2005թ. հոկտեմբերից ստանձնելով Ներքին Խնձորեսկ համայնքի ղեկավարի պաշտոնը և հանդիսանալով պաշտոնատար անձ, ապօրինի, գույք հափշտակելու և այն լվանալու, այն է՝ դստերը՝ Լիանա Արզանյանին անհատույց հողամաս օտարելու և այդ պատրվակով նրա միջոցով որդուն՝ Լյովա Արզանյանին, գույք փոխանցելու դիտավորությամբ, ծառայողական լիազորությունները և ծառայողական դիրքից բխող հեղինակությունն օգտագործելով՝ իրենից ծառայողական կախվածության մեջ գտնվող աշխատակազմի քարտուղար Սանթրիկ Մաքունցին հանձնարարել է Ներքին Խնձորեսկ համայնքի տնտեսությունների 01.01.2006թ. առ 01.01.2010թ. գրքում մտցնել իրականությանը չհամապատասխանող գրառումներ, այն է՝ որպես առանձին տնտեսություն հաշվառել մինչ այդ Մարտունի Արզանյանի ընտանիքի շնչերի կազմում հաշվառված, առանձին ծուխ չհանդիսացող, ավելին, դեռևս 1990-ական թվականների կեսից ծնողների հետ փաստացի Խնձորեսկ համայնքում բնակվող (26.06.2002թ. դրությամբ նաև՝ հաշվառված), իսկ 1997թ. Երևան քաղաքի բնակիչ Արսեն Հովհաննիսյանի հետ ամուսնացած և համատեղ Երևանում բնակվող Լիանա Արզանյանին ու նրա երեխաներին՝ 08.07.1998թ. և 27.11.2004թ. Երևան քաղաքում ծնված Վանուշ և Արմենուհի Արսենի Հովհաննիսյաններին, ինչից հետո Մարտունի Արզանյանը, հիմնվելով սեփականության իրավունքի ծագման համար հիմք հանդիսացող, տվյալ իրավիճակին ոչ վերաբերելի փաստաթղթերի տվյալների վրա, անձամբ ստորագրել ու կնիքել է դրանք, ինչպես նաև դրանց հիման վրա կազմված համայնքի ղեկավարի 22 մայիսի 2006թ. N 2Ա կեղծ որոշումը:

Լիաննա Արզանյանը, նշված գույքի հանցավոր ծագումը թաքցնելու համար, նախնական համաձայնությամբ, փաստացի չկայացած վիճակահանության արդյունքներով համայնքի ղեկավար Մարտունի Արզանյանի հետ 2006թ. մայիսի 24-ին կնքել է հողամասի նվիրատվության մասին նոտարական վավերացմամբ 22.05.2006թ. պայմանագիրը, որոնք ՀՀ կադաստրի կոմիտեի Գորիսի տարածքային ստորաբաժանում ներկայացնելուց հետո՝ նրան տրվել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 26.05.2006թ. 09-063-001-024 կադաստրային ծածկագրով

վկայականը: Այնուհետև Լյովա Արզանյանը, հստակ գիտակցելով, որ թիվ 09-063-001-024 կադաստրային ծածկագրով վարելահողը Լիաննա Արզանյանին փոխանցվել է Մարտունի Արզանյանի հանցավոր գործունեության արդյունքում, խեղաթյուրել է տվյալ գույքի ծագման աղբյուրը, մասնավորապես՝ նախնական պայմանավորվածության համաձայն 2007թ. փետրվարի 23-ին ձևական առուվաճառքի պայմանագիր է կնքել Լիանա Արզանյանի հետ իբրև տարածքը 1 մլն ՀՀ դրամով գնելու վերաբերյալ և ձեռք է բերել փաստացի համայնքի սեփականությունը հանդիսացող և օրենքի խախտմամբ՝ Մարտունի Արզանյանի կողմից հափշտակություն կատարելու արդյունքում, Լիանա Արզանյանի տնօրինմանն անցած, 4,824 հա մակերեսով հողամասերը:

Վերոգրյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի համադրված վերլուծությունից հետևում է, որ վերոհիշյալ որոշումներով խախտվել են համայնքի շահերը, ուստի՝ առաջարկում եմ հետևյալ ստորև նշված որոշումները վերացնելու պահանջով սույն առաջարկությունը ստանալու պահից մեկամսյա ժամկետում հայց հարուցել իրավասու դատարան և հարուցված հայցի մասին նույն օրը հայտնել ՀՀ Սյունիքի մարզի դատախազություն, իսկ հայց չհարուցելու պարագայում նույն ժամկետում այդ մասին տեղեկացնել ՀՀ Սյունիքի մարզի դատախազությանը.

1. Սյունիքի մարզի նախկին Ներքին Խնձորեսկ համայնքի ավագանու՝ 2004թ. սեպտեմբերի 10-ի որոշման հիման վրա 2004թ. սեպտեմբերի 10-ին կազմված 4.824հա հողամասը սեփականության իրավունքով Լիանա Մարտունի Արզանյանին անհատույց տրամադրելու վիճակահանության մասին թիվ 1 արձանագրությունը:

2. Սյունիքի մարզի նախկին Ներքին Խնձորեսկ համայնքի ղեկավարի 2006թ. մայիսի 22-ի որոշումը՝ համայնքային սեփականություն հանդիսացող՝ 09-063-001-024 կադաստրային ծածկագրով, 4.824հա հողամասը Լիանա Մարտունի Արզանյանի ընտանիքին անհատույց սեփականության իրավունքով օտարելու մասին, և դրա հիման վրա 2006թ. մայիսի 22-ի՝ հողամասի նվիրատվության մասին պայմանագիրը, և որպես գործարքի անվավերության հետևանք՝ անվավեր ճանաչել Լիանա Մարտունի Արզանյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը:

3. Նույն հողամասը Լիանա Մարտունի Արզանյանի կողմից Լյովա Մարտունի Արզանյանին վաճառելու մասին 2007թ. փետրվարի 03-ի՝ անշարժ գույքի՝ վարելահողի առուվաճառքի պայմանագիրը և որպես գործարքի անվավերության հետևանք՝ անվավեր ճանաչել Լյովա Մարտունի Արզանյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը:

4. Սյունիքի մարզի նախկին Ներքին Խնձորեսկ համայնքի ավագանու 2009թ. մարտի 31-ի որոշման հիման վրա 2009թ. մայիսի 04-ի՝ համայնքային սեփականություն հանդիսացող՝ 09-063-105-026 կադաստրային ծածկագրով, 19.88հա հողամասն աճուրդով «Ներքին Թաղի Հայարփի» ՍՊ ընկերությանը /տնօրեն Արտյուշա Մինասյան/ վաճառելու և 2009թ. մայիսի 04-ի հողամասերի աճուրդով վաճառքի արդյունքների մասին արձանագրությունները: Նույն հողամասը Արտյուշա Մինասյանին օտարելու

մասին Սյունիքի մարզի նախկին Ներքին Խնձորեսկ համայնքի ղեկավարի 2009թ. մայիսի 05-ի N05Ա որոշումը:

5. Նույն հողամասը «Ներքին Թաղի Հայարփի» ՍՊ ընկերությանը վաճառելու մասին 2009թ. մայիսի 18-ի՝ հողի առուվաճառքի պայմանագիրը և որպես գործարքի անվավերության հետևանք՝ անվավեր ճանաչել«Ներքին Թաղի Հայարփի» ՍՊ ընկերության անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը: «Ներքին Թաղի Հայարփի» ՍՊ ընկերության 2001թ. հուլիսի 24- մասնակիցների ընդհանուր ժողովի հիման վրա հողամասը Լյովա Մարտունի Արզանյանի, Գայանե Գրիշայի Արզանյանի և Մարտունի Մելիքի Արզանյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը:

6. Սյունիքի մարզի նախկին Ներքին Խնձորեսկ համայնքի ավագանու 2009թ. հուլիսի 08-ի որոշման հիման վրա 2009թ. հոկտեմբերի 01-ի՝ համայնքային սեփականություն հանդիսացող՝ 09-063-105-027 կադաստրային ծածկագրով, 12.58հա հողամասն աճուրդով «Ներքին Թաղի Հայարփի» ՍՊ ընկերությանը /տնօրեն Արտյուշա Մինասյան/ վաճառելու և 2009թ. հոկտեմբերի 01-ի հողամասերի աճուրդով վաճառքի արդյունքների մասին արձանագրությունները:Նույն հողամասը Արտյուշա Մինասյանին օտարելու մասին Սյունիքի մարզի նախկին Ներքին Խնձորեսկ համայնքի ղեկավարի 2009թ. հոկտեմբերի 02-ի N06Ա որոշումը:

7. Նույն հողամասը «Ներքին Թաղի Հայարփի» ՍՊ ընկերությանը վաճառելու մասին 2009թ. հոկտեմբերի 09-ի՝ հողի առուվաճառքի պայմանագիրը և որպես գործարքի անվավերության հետևանք՝ անվավեր ճանաչել «Ներքին Թաղի Հայարփի» ՍՊ ընկերության անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը: «Ներքին Թաղի Հայարփի» ՍՊ ընկերության 2001թ. հուլիսի 24- մասնակիցների ընդհանուր ժողովի հիման վրա հողամասը Լյովա Մարտունի Արզանյանի, Գայանե Գրիշայի Արզանյանի և Մարտունի Մելիքի Արզանյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ մեկամսյա ժամկետում հարուցված հայցի մասին տեղեկատվության բացակայության դեպքում դատախազությունը ձեռնամուխ կլինի «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հիմքով հայց հարուցելու լիազորության իրացմանը:

Հայցադիմում ներկայացնելու համար հիմք հանդիսացող փաստաթղթերի պատճեններն ուղարկվել են 2024թ. հունիսի 4-ի 65/3800-24 առաջարկությանը կից:

Մարզի դատախազ, արդարադատության
առաջին դասի խորհրդական՝ **Մ.Պողոսյան**

6/25/2024

X

ՄԱՍԻՍ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN MASIS 3408850364